

ԲԱՌԱՅԻՆ ԽՏԱՑՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔ

Հայտնի է, որ միևնույն միտքը կարելի է մի քանի կերպ արտահայտել՝ ավելի սեղմ և խտացված, կամ ավելի ծավալուն: Բրեուսը¹ որպես օրինակ բերում է Կեսարի "Veni, vidi, vici" /"Եկա, տեսա, հաղթեցի"/ համրահայտ արտահայտությունը, որի իմաստը փոխանցելու համար կարելի է տալ շատ ավելի ընդարձակ մեկնաբանություն, ինչպես օրինակ "Եկա Գալիա, տեսա այնտեղ բնակվող ցեղերի հզորությունն ու որոշեցի գրավել այդ երկիրը": Մեկնաբանության ընդարձակության աստիճանը կախված է ոչ թե թարգմանչի կամքից, այլ ելակետային և թարգմանության լեզուներում գործող օրենքներից:

Արտահայտման այս կամ այն միջոցների ընտրությունը զգալիորեն կախված է գործառական ոճի կամ ենթաոճի պահանջներից: Ընդհանուր առմամբ տեղեկատվական բնույթի տեքստերին, ինչպես նաև համընթաց թարգմանությամբ բնորոշ է արտահայտման ավելի սեղմ եղանակը: Այդ պահանջը համարվում է հրապարակախոսական ոճի հիմնական պահանջներից մեկն ըստ Շվեյցերի²: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցանկացած թարգմանություն իր ծավալով գերազանցում է բնագրին: Այդ փաստին են անդրադառնում թարգմանության տեսության մի շարք մասնագետներ, ինչպես, օրինակ, Նյումարկը³, Գ.Բարտը⁴, Շվեյցերը, Կոմիսարովը⁵ և այլք: Բարտի հետազոտությունն, օրինակ, ցույց է տալիս, որ անգլերենից ֆրանսերեն կատարվող թարգմանության հետևանքով տեքստի ծավալն աճում է և ոչ թե նվազում: Ըստ Շվեյցերի, ի համեմատություն ֆրանսերենի, անգլերենին բնորոշ է մտքի ավելի հակիրճ արտահայտման ձևը, բայց այդ դեպքում իրավացի կլիներ ենթադրել, որ ֆրանսերենից անգլերեն թարգմանելիս տեքստի ծավալը կնվազի: Սակայն դա տեղի չի ունենում: Հակառակը՝ տեքստի ծավալն այս դեպքում միտում ունի ավելանալու: Սա բնորոշ է հատկապես վերլուծական լեզվից համադրական լեզու կատարվող թարգմանությանը:

¹ Бреус Е.В. Основы теории и практики перевода с русского языка на английский. УРАО, 1998

² Швейцер А. Д. Перевод и лингвистика. Москва, 1973.

³ Newmark Peter. A Textbook of Translation. Prentice Hall, 1988.

⁴ Барт Г. Некоторые стилистические соображения о переводе с французского языка на английский.

⁵ Комиссаров В.Н. Современное переводоведение. Москва, изд. ЭТС, 1999

Սակայն անգլերենը, լինելով վերլուծական լեզու, նույնպես զերծ չի մնում այս միտումից: Չնայած, ի տարբերություն հայերենի, անգլերենն ընտրում է ավելի հակիրճ արտահայտման եղանակը, հայերենից անգլերեն կատարված թարգմանության ծավալը չի նվազում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ թարգմանության ժամանակ գործում են մի քանի միտումներ, մասնավորապես տեքստի ծավալի վրա ուղղակի ազդեցություն ունեն բուն լեզվական կառուցվածքի և համակարգի բնորոշ գծերը, որոնք ներառում են լեզվի բոլոր մակարդակները, ոճական յուրահատկությունները, ինչպես նաև թարգմանության կանոններից բխող առանձնահատկությունները: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ թարգմանությունը ենթադրաբար չպետք է ծավալով գերազանցի բնագրին: Սակայն հայտնի է նաև այն միտումը, թե թարգմանության մեջ տեղ են գտնում այնպիսի բառային միավորներ, կառույցներ, մտքեր, որոնք բնորոշ են տվյալ լեզվին և թարգմանության լեզվում բացատրություն են պահանջում: Նման պարագայում հարկ է լինում տալ ավելի ընդարձակ մեկնաբանություն՝ միտքն առավել հասկանալի դարձնելու համար, և նպատակահարմար չէ այն սեղմել՝ ավելի հակիրճ արտահայտելու նպատակով: Այլ կերպ թարգմանիչն աշխատում է հավասարակշռության բերել այդ իրար հակադրվող միտումները: Դա վերաբերում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թարգմանությանը: Այսպիսով, նման հավասարակշռությունը ձեռք է բերվում տեքստի խտացմամբ:

Ըստ Ռ.Կ. Մինյար-Բելոռուչևի⁶ խտացումը ելակետային տեքստի վանկային ծավալի նվազեցումն է՝ խոսքի երկրորդական ինֆորմացիա կրող միավորները կրճատելու, ինչպես նաև բառային և քերականական փոխակերպումների միջոցով: Խտացումը հաճախ կիրառվում է բանավոր, հատկապես համընթաց թարգմանության ժամանակ՝ նկատի ունենալով թարգմանչի տրամադրության տակ եղած ժամանակի սղությունը: Ա. Նազարյանը⁷ տալիս է ելակետային տեքստի խոսքային խտացման մի օրինակ՝

Սեն-Նազարի արդյունաբերական ձեռնարկությունների 12 հազար բանվորներ մասնակցեցին միտինգի՝ բողոքելու տեղական մետաղագործական գործարանի վարչության 240 բանվորների աշխատանքից ազատելու որոշման դեմ:

Խտացումից հետո՝

Սեն-Նազարի 12 հազար բանվորներ միտինգ անց կացրեցին՝ 240 բանվորների աշխատանքից ազատելու որոշման դեմ:

⁶ Миньяр-Белоручев Р. К. Как стать переводчиком? Москва, Готика, 1999.

⁷ Նազարյան Ա. Հ., Բաղդասարյան Հ. Գ. Թարգմանչական ուսումնական ձեռնարկ:

Ըստ Նազարյանի, չի կարելի խտացումը նույնացնել կրճատման հետ, թեև երկու փոխակերպումների արդյունքը տեքստի վանկային ծավալի նվազեցումն է: Խտացումը, որպես կանոն, թարգմանիչը կատարում է ելակետային տեքստում դեռ մինչև թարգմանության գործընթացը: Այն նպատակ ունի օգնել թարգմանչին բանավոր՝ հատկապես համընթաց թարգմանություն կատարելիս, երբ զգալիորեն սահմանափակ է նրա ժամանակը: Ինչ վերաբերում է կրճատմանը, ապա այն պայմանավորված է օրբեկտիվ պատճառներով՝ ելակետային և թարգմանող լեզուների քերականական և բառային համակարգերի տարբերությունները թարգմանչի կամքից կախված չեն:

Բերված սահմանումից երևում է, որ ուսումնասիրվող խնդիրը մանրամասն չի հետազոտվել, և հստակ պատկերացում չկա նաև խտացման տիպերի ու դրանց տարբերակման սկզբունքների վերաբերյալ: Համաձայնություն չկա նաև խտացման տիպերի մետալեզվական արտահայտության ոլորտում: Որոշ հեղինակների մոտ խտացման տակ հասկացվում է միայն ավելորդ տարրերի սղումը, այսինքն՝ փորձ է արվում տարբերել խտացումը որպես գերհագեցածության թեթևացում: Այլ հեղինակներ տարբերակում են խտացումն ու կրճատումը, որը դիտվում է որպես օրբեկտիվ պատճառների հետևանք և պայմանավորված է լեզուների քերականական և բառային համակարգերի տարբերություններով: Սակայն խտացման երևույթն ավելի խորն է և պայմանավորված է այն փաստով, որ տարբեր լեզուներում միևնույն իրադրությունը ստանում է տարբեր նկարագիր, ընդ որում այդ իրադրության նկարագրության աստիճանն ու արտահայտման միջոցները տարբեր լեզուներում տարբեր են:

Առկա թարգմանական գրականության մեջ նշվում է, որ անգլերենում իրադրությունը սովորաբար նկարագրվում է ավելի սեղմ ու խիտ, քան, ասենք, ֆրանսերենում կամ ռուսերենում: Առանձին հատկանիշներն անգլերենում ավելի շուտ ներակա են և ենթադրվում են համատեքստից, քան ստանում են բառային արտահայտություն: Անգլերենի հարաբերակցությունը հայերենի հետ այս հարցում պարզ չէ և պահանջում է մանրամասն ուսումնասիրություն:

Սակայն այս ընդհանուր միտումը չի բացառում հակառակ դեպքերը: Հայտնի են դեպքեր, երբ անգլերենը պահանջում է կոնկրետացում:

Օրինակ.

I regret *to say* that he is not equal to this task. - Ձեզում եմ, բայց նա պատրաստ չէ այս աշխատանքին:

He wrote me *to say* that he could not come to see me. - Նա գրեց, որ չի կարող ինձ այցելել:

She saw at once from his face that he had good news *to tell*. — Նրա դեմքից աղբիւն անմիջապէս հասկացաւ, որ լավ լուր է բերել:

She is coming *to stay* tomorrow. — Նա վաղը գալիս է:

Բերված օրինակներում անգլերենը պահանջում է գործողության նպատակը մեկնաբանող լրացում, մինչդեռ հայերենում դրա օգտագործումն աննպատակահարմար է, քանի որ ենթադրվում է համատեքստից:

Այլ դեպքերում անգլերենը մասնավորեցնում է քանակն արտահայտող որոշչի կիրառմամբ, որը հայերենում չի ստանում իր արտահայտությունը: Օրինակ՝ *Will you have some tea?* — Թեյ կ'սմն⁸ս:

Անգլերենը դերանվան մասնավորեցման ակնհայտ միտում ունի, ինչը նույնպէս հայերենում նկատելի չէ: Օրինակ՝

She stared at me with horror in *her* eyes. — Նա ինձ սկեռեց հայացքը՝ սարսափն աչքերում:

Առանձին դեպքերում պարագա երկրորդական նախադասությունների կիրառությունը նույնպէս խտացում է ենթադրում հայերեն թարգմանության մեջ: Օրինակ՝

Her voice, *when it came*, was ironic. — Նրա ձայնը հեզմական էր:

Ռուս թարգմանական գրականության մեջ⁸ առանձնացվում են խտացման երկու հիմնական տարատեսակ՝ պայմանավորված և ոչ պայմանավորված խտացում, որոնք իրականանում են հիմնվելով տվյալ լեզուներում գործող լեզվական նորմերի և առանձնահատկությունների վրա: Ինչպէս ցույց է տվել ուսումնասիրությունը, պայմանավորված խտացումն իր մեջ ներառում է երեք հիմնական ուղղություններ՝ իմաստային սղում, բառային սղում և շարահյուսական փոխակերպում:

Տվյալ հոդվածը նվիրված է բառային խտացման վերլուծությանը բառակապակցության մակարդակի վրա:

Գոյություն ունեն բառային խտացման իրականացման տարբեր եղանակներ: Դրանցից են բառակապակցության փոխարինումը բառով կամ ավելի սեղմ բառակապակցությամբ: Վերլուծենք դրանք առանձին-առանձին:

Որպէս առաջին տիպի խտացման օրինակ կարող են ծառայել այն թարգմանությունները, որտեղ խտացման են ենթարկվում հայերենում հաճախակի գործածություն ունեցող «բնույթ», «միջոց», «ծև», «համապարհ», «ծրագիր»

⁸ Տես, օրինակ, Денисенко Ю.А. О некоторых приемах компрессии при переводе с русского языка на английский (на материалах периодической печати). Книга Теория перевода и научные основы подготовки переводчиков. Материалы Всесоюзной научной конференции. Ч. I. М., МГПИИЯ им. М.Тореза, 1975

բառային միավորները, որոնց արտացոլումն անգլերեն թարգմանության մեջ տանում է դեպի բառացիություն: Օրինակ՝

օրենսդրական *բնույթի* գործողություն — *legislative act*

ուսումնական ծրագիր — *curriculum*

օդային ճանապարհով տեղափոխել — *to airlift*.

խտացում կարող է իրականանալ նաև այն դեպքերում, երբ անգլերենի մեկ բառի իմաստային դաշտը պարունակում է հայերենի բառակապակցության իմաստային բաղադրիչները: Օրինակ.

ծեռնպահ մնալ քվեարկությունից — *to abstain/restrain from voting*

բարձր մակարդակի հանդիպում — *summit*

համապատասխան օրինակ բերել — *to illustrate*

խորությամբ վերլուծել — *to depth-probe*

հասարակական կյանքի խնդիրներ — *social problems*

արժանանալ միջազգային հանրության դատին — *to be pilloried*

արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար — *foreign minister*

բարձր գնահատել — *to appreciate*

Հայերենում խտացման են ենթարկվում նաև անգլերենի աղմուկ և շարժում արտահայտող ձևի պարագաները՝ անգլերենում արտահայտվելով մեկ բառով: Օրինակ.

աղմուկով կամ դղրդյունով շարժվել — *to grind, to roar*.

Տանկերը դղրդյունով մտան քաղաք: — *The tanks grinded/roared into the city*.

Այս դեպքում խտացման են ենթարկվում հայերեն նախադասության այն անդամները, որոնք կարող են հեշտորեն վերականգնվել համատեքստից: Փաստորեն, տվյալ դեպքում խտացումը թույլ է տալիս խուսափել նախադասության կամ բառակապակցության մեջ միևնույն իմաստային բաղադրիչների կրկնությունից:

Խտացումը կարող է տեղի ունենալ ոչ միայն բառակապակցությունը բառով փոխարինելու միջոցով, այլև անմիջական շարահյուսական կապերով չկապված երկու կամ ավելի բառերի փոխարեն մեկ բառի օգտագործմամբ: Նման դեպքում տեղի է ունենում իմաստային բաղադրիչների վերախմբավորում՝ մի քանի բառերի փոխարեն օգտագործված մեկ բառն իր մեջ ներառում է այդ բառերի իմաստային բաղադրիչները: Փաստորեն, նման փոխակերպման իրագործման համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ բառի իմաստային ավելի լայն դաշտը: Բերենք մեկ օրինակ.

Ավտոմեքենաների տարեկան միջին արտադրությունը կկազմի մոտավորապես մեկ միլիոն:

Այդ միտքն անգլերենում կարելի է մի քանի կերպ արտահայտել:

The average annual car output will be about one million.

Հայերենի "տարեկան միջին" որոշչի իմաստային բաղադրիչները կարելի է այլ կերպ վերախմբավորել:

On an average the annual car output will be about one million.

The annual car output will amount to an average of about one million.

Միևնույն ժամանակ "միջին" ածականի իմաստային բաղադրիչները կարող են միավորվել "միջին տարեկան արտադրությունը կկազմի" բայական ստորոգյալի հետ՝ անգլերենով արտահայտվելով մեկ բառով՝ "to average". Ստանում ենք թարգմանության ավելի խտացված տարբերակը՝

The annual car output will average to one million.

Խտացման նման տարբերակը կարելի է անվանել *իմաստային խտացում*:

Բառային խտացման երկրորդ տարատեսակը բառակապակցության փոխարինումն է ավելի սեղմ բառակապակցությամբ: Այս դեպքում թարգմանչի խնդիրն է գտնել անգլերենի բառակապակցության իմաստային կենտրոն կազմող բառը և հայերեն բառակապակցության մեջ գտնել այն լրացնող բառերը՝ իրականացնելով խտացում: Օրինակ.

ժողովուրդները և *հասարակության լայն զանգվածները* բարեկարգումներ են ակնկալում:

Nations and public at large ardently wish to see improvements.

Այս օրինակում "հասարակություն" բառը կրում է բառակապակցության իմաստային շեշտը: "Լայն զանգվածները" բառակապակցությունը թարգմանիչը փոխարինել է "at large" կապակցությամբ, որն իր մեջ պարունակում է "լայն զանգվածների" իմաստային բաղադրիչը: Այսպիսով տեղի է ունեցել խտացում առանց իմաստի որևէ կորստի: Մեկ այլ օրինակ.

Արդյո՞ք այստեղ կարելի է համեմատություն անց կացնել *անցյալ դարում տեղի ունեցած* բանավեճի հետ:

Is it akin to last century's polemics?

Այս օրինակում հայերենի որոշիչ դերբայական դարձվածը փոխարինվում է անգլերենի ստացական հոլովով, որտեղ պարագան դառնում է որոշիչ և գրավում է նախադաս դիրք:

Խտացում կարելի է իրականացնել նաև հայերենում լիմաստ բայը անգլերենի անվանական ստորոգյալով փոխարինելով: Օրինակ՝

առաջատար տեղ գրավել արտադրության մեջ – *to be a key supplier*

առաջատար տեղ գրավել արտահանման մեջ – *to be a key exporter*

առաջնային տեղ գրավել մահացու հիվանդությունների մեջ – *to be No*

killer.

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում գործողություն ցույց տվող բառը փոխարինվում է գործողությունը կատարողի անվամբ: Այսպիսով, անվանական արտահայտությամբ լրացվող բայական արտահայտությունը փոխարինվում է մեկ միասնական անվանական արտահայտությամբ՝ կազմելով ստորոգելիական խումբ:

Հայերենում հաճախ որպես լրացում անհրաժեշտ են այնպիսի գոյականներ, ինչպիսիք են "խնդիր", "հարց", "գործ", "աշխատանք", "բան" և այլն: Այդ դեպքերում անգլերենն այդ լրացման կարիքը չի զգում: Օրինակ.

Այսօր շատ *դրական բան* է նկատվում համատեղ ձեռնարկությունների և կոոպերատիվների աշխատանքի մեջ:

There is much that is *commendable* in the work of joint ventures and cooperatives.

Շատ հաճախ խտացումն իրականանում է իմաստային բաղադրիչների վերախմբավորման հետևանքով: Օրինակ՝

կտրուկ փոփոխություն մտցնել ներքին քաղաքականության ընթացքի մեջ – *to make a sharp turnabout*

շուկայական ռեֆորմների ուղով երկրի հետագա զարգացման հեռանկարները – *market-oriented development politics*

Այս օրինակում բառակապակցության իմաստային կենտրոնը դուրս է բերվել համատեքստից, որն իր հետ առաջ է բերել լրացնող հասկացությունների հնարավոր տարբերակներ՝ "հեռանկար", "նպատակ" "քաղաքականություն" իմաստային բաղադրիչները: "Երկիր", "հետագա", "ուղով" բառերը թարգմանության մեջ չեն գտել իրենց արտահայտությունը, քանի որ դրանց իմաստը հեշտորեն վերականգնվում է իմաստային համատեքստից:

Խտացումն, իհարկե, պահանջում է այն բոլոր դեպքերի առավել խորը քննություն, երբ ընդարձակ բառակապակցությունը սղվում է, խտանում, վերածվում ավելի սեղմ բառակապակցության, և երբ ազատ կապակցությունը խտանում է մինչև մեկ բառ:

Անկասկած իմաստային և բառային խտացման ուսումնասիրությունն ավելի լայն հնարավորություն կտա պարզաբանելու խտացման էությունը, նրա հնարավորությունները որպես թարգմանական հնարանք և բացահայտելու նրա տիպերը: Սակայն այսօր արդեն ակնհայտ է, որ խտացումը, պայմանավորված, մի կողմից, լեզվին բնորոշ ընտրողականությամբ և մյուս կողմից լեզվի գերհագեցածությամբ, լայն հնարավորություն է ստեղծում լեզվական միջոցների ավելի սեղմ օգտագործման համար, մասնավորապես բանավոր թարգմանության մեջ: